ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No_____-Ա____ «_____» _____2021_____

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 10-րդ մասը՝

Հրամայում եմ

1. Հաստատել հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորմանը ներկայացվող փաստաթղթերի ամբողջական ցանկը՝ համաձայն Հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱՐԱՐ՝ **ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ**
/պաշտոնակատար/

Invalid signature

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված

ՀՀ կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարի

2021 թ. ----------Ա հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՑԱՆԿԸ

1. Ուսուցչի ատեստավորմանը ներկայացվող փաստաթղթերի փաթեթը ներառում է՝

1) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

2) մասնագիտական կրթությունը և որակավորման աստիճանը հավաստող փաստաթղթի պատճենը.

3) ատեստավորման նպատակով ուսուցչի վերապատրաստման վկայականի պատճենը կամ այլ վերապատրաստումների վերաբերյալ փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում) կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1667-Ն որոշման Հավելվածի 18-րդ կետով սահմանված դեպքում՝ անդորրագիրը (առկայության դեպքում):